



CALOUSTE GULBENKIAN
FOUNDATION

INSPARK – ՀՈՍԱՆՔԻ ՄԷՋ

Նոր ստեղծարար նախաձեռնություն Լիբանանի հայ
երիտասարդության համար

Գալուստ Կիլպենկեան Հիմնարկություն
Հայկական Համայնքներու Բաժանմունք

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նախագիծերու բաց մրցույթ 2025

1. Ներածական – Խորապատկեր
2. Նպատակներ – Բնաբաններ եւ առաջնահերթություններ
3. Դիմումի պայմաններ եւ չափանիշեր
4. Գնահատումի չափանիշեր
5. Վերջնաժամկետ եւ գործընթաց
6. Նախահաշիվ
7. Լրացուցիչ զօրակցություն եւ ծրագրային օգնություն
8. Ինչպե՛ս դիմել



Նախագիծերու բաց մրցոյթ – 2025

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքը (այսուհետեւ ԳԿՀ) ուրախ է յայտարարելու նպաստատուութեան նոր ծրագիր մը լիբանանահայ երիտասարդութեան համար: Այս նախաձեռնութիւնը կը զօրակցի նորաշունչ նախագիծերու որոնք կ'անդրադառնան լայնածիր բնաբաններու ներառեալ ինքնութիւն, ընկերային մարտահրաւերներ, մարդկային իրաւունքներ, արհեստագիտութիւն, լեզու եւ համայնքի կենսունակութիւն: Ծրագրին հիմքը հայ երիտասարդութեան, մշակութային յառաջդիմութեան եւ ստեղծարարութեան նկատմամբ ԳԿՀ-ի յանձնառութիւնն է:

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ – ԽՈՐԱՊԱՏԿԵՐ

Հիմնարկութիւնը լիբանանահայ կենսունակ համայնքին հետ իր երկարամեայ գործակցութեան ընթացքին ծնունդ տուած է ստեղծարար եւ օգտակար բազմաթիւ ծրագիրներու ինչպէս՝ [Նորարար Մշակոյթի Ծրագիրը](#), [Ուսուցիչներու վերաորակաւորման ծրագիրը](#) եւ այլ նախագիծեր: Այնուամենայնիւ վերջին տարիներուն Լիբանանի մէջ տիրող զարգացումները դժուարացուցած են նոր նախաձեռնութիւններու մեկնարկը՝ հակառակ շարունակուող ճիգերուն: Այժմ ԳԿՀ-ն կարելիութիւնը կը տեսնէ վերանորոգելու բնիկ արեւմտահայախօս երիտասարդներու զօրակցելու իր յանձնառութիւնը՝ անոնց մատուցելով ստեղծագործելու եւ ինքնաարտայայտուելու նոր առիթներ:

Այս նուիրումը կը բխի Սփիւռքի տարածքին հայ մշակոյթը, լեզուն եւ ինքնութիւնը ամրապնդելու Հիմնարկութեան ընդհանուր առաքելութենէն: Լիբանանի մէջ այս նպատակները վերանորոգ նշանակութիւն ստացած են շարունակուող մարտահրաւերներու դիմաց: Հայ երիտասարդութիւնը 2025-ին կը դիմագրաւէ յետպատերազմեան իրականութիւններ եւ կը կերտէ նոր սկիզբներ՝ պահպանելով իր հարուստ ժառանգութիւնը միաժամանակ արձագանգելով շարունակ զարգացող աշխարհի ժամանակակից խնդիրներուն:

INSPARK նպաստի ծրագիրը կը միտի կայծ տալու ինքնայայտնաբերումի, ստեղծարար արտայայտութեան եւ համայնքէն բխող փոփոխութեան: Հրաւեր մըն է լիբանանահայ երիտասարդութեան՝ նոր ուղիներ բանալու, նորարար գաղափարներ ձեւաւորելու եւ այլազան կարծիքներ բաժնելու աշխարհին հետ: INSPARK առիթ կու տայ մասնակիցներուն ծրագրելու եւ իրականացնելու իրենց կեանքն ու համայնքները հարստացնող իմաստալից նախագիծեր, ի վերջոյ նպաստելով հայ մշակոյթի ապագան ձեւաւորելու:



2. ՆՊԱՏԱԿՆԵՐ – ԲՆԱԲԱՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Խրախուսել լիբանանահայ երիտասարդության ստեղծարար արտայայտությունը, անոնց միջոցով ամրապնդել համայնքային ինքնությունը եւ խթանել ընկերային փոփոխությունը:
- Քաջալերել երիտասարդները պեղելու իրենց ստեղծագործական ներուժը՝ արձագանգելով ընկերային եւ մշակութային հիմնական խնդիրներու:
- Զօրակցիլ նոր ձայներու եւ նորարար գաղափարներու որոնք կը հարստացնեն Հայկական Սփիւռքի կեանքն ու մշակոյթը:

ԲՆԱԲԱՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջարկները պետք է ստեղծարար մտեցումով եւ ներգործելու կարողականութեամբ անդրադառնան հետեւեալ նիւթերէն մէկուն կամ մէկ քանիին .

ա. Յետպատերազմեան դիմակայություն եւ նոր մեկնարկներ

- Ամոքում եւ վերականգնում
Պեղել հակամարտություններէ ետք համայնքներու ի գործ դրած հոգեկան եւ ֆիզիքական վերականգնումի միջոցները:
- Յոյսի պատումներ
Պատմել փոխակերպող փորձառություններ, քաղուած դասեր եւ խաղաղ ապագայի տեսլականներ լուսարձակի տակ առնող պատմություններ:
- Հաշտություն եւ փոխըմբռնում
Ներկայացնել պատմականօրէն լարուած յարաբերություններ ունեցող համայնքներու միջեւ երկխօսությունը խթանող ճիգեր:

բ. Հայկական Սփիւռքի ինքնություն եւ մշակոյթ

- Պահպանություն եւ նորարարություն
Ներդաշնակել ասանդական արուեստի ձեւերը, լեզուն եւ մշակութային սովորությունները ներկայի վերամեկնաբանություններու եւ ժամանակակից մտեցումներու հետ:
- Հասարակաց ժառանգություն եւ համաշխարհային կապեր
Ուսումնասիրել թէ ինչպէ՛ս Սփիւռքի համայնքները կապերը կը պահպանեն մէկգմէկու եւ հայրենիքին հետ՝ միաժամանակ ներգրաւուելով մշակութային նոր ազդեցություններու մէջ:



- Գաղթ եւ պատկանելիություն
Քննել անձնական եւ հաւաքական գաղթի, տեղաշարժի եւ տարասեռ ինքնություններու ձեւաւորման փորձառություններ:

գ. Ընկերային հարցեր եւ մարդկային իրաւունքներ

- Ճնշում եւ ուժային կառոյցներ
Ուսումնասիրել համակարգային խտրականությունը, ճնշումը եւ պատմական անարդարությունները հայկական շրջարկներէ ներս կամ անդին, ներառեալ դեկավարութեան հարցեր, տնտեսական անհաւասարություններ եւ ընկերային բաժանումներ:
- Կիներու իրաւունքներ եւ սեռային հաւասարություն
Անդրադառնալ ընկերային, քաղաքական եւ տնտեսական ոլորտներու մէջ կիներու խտրականութեան, իրաւասութեան եւ յառաջդիմութեան:
- Փոքրամասնություններու իրաւունքներ
Խրախուսել ներառական տարածքներ կառուցելու, լուսանցքայնացուած ձայներ վերակայացնելու եւ վնասակար կարծրատիպերու մարտահրաւեր ուղղելու ճիգերը:

դ. Նորարարություն եւ թեքնաբանություն (արհեստաբանություն՝ արհեստական բանականություն, թուային լրատուամիջոցներ եւ այլն)

- Թուային հզօրացում
Օգտագործել տեղեկատուական թեքնաբանությունը (IT) իբրեւ լծակ կրթութեան, գործուն քաղաքականութեան ջատագովութեան (activism) եւ համայնքի կառուցման:
- Գեղարուեստական հետազօտություն
Համարկել արհեստական բանականությունը, երեւութական իրականությունը (virtual reality) եւ թուային նորայայտ գործիքները ստեղծագործական եւ մշակութային նախագիծերու մէջ:
- Տեղեկատուութեան թեքնաբանությունը եւ լեզու
Հետազօտել թեքնաբանութեան, թուային լրատուամիջոցներու եւ արհեստաբանութեան վրայ հիմնուած գործուն քաղաքականութեան ջատագովութեան դերը լեզուի (յատկապէս արեւմտահայերէնի) կենսունակութեան մէջ:

ե. Ստեղծագործութեան այլ բնաբաններ ընկերային փոփոխութեան համար

- Կենսամիջավայրի արդարադատություն եւ կլիմայի կայուն զարգացում
Անդրադառնալ բնապահպանումի մարտահրաւերներու, կայունութեան միտող գործելակերպերու եւ համայնքի գլխաւորութեամբ կենսամիջավայրի նախաձեռնություններու:



- Երիտասարդության լիազորություն (empowerment) և կրթություն
Լուսարձակի տակ առնել երիտասարդության առաջնորդող դերը, քաղաքացիական ներգրառումաժողովները և սերունդներու միջև գործակցությունը, ներառեալ գործակցական նախագիծեր որոնք կը մեկտեղեն այլազան համայնքներ և կը նպաստեն միջմշակութային փոխըմբռնման ու համերաշխության:
- Գեղարուեստական գործուն քաղաքականության ջատագովություն և գրուցարանություն
Ներառել կատարողական արուեստներ, գրաւոր-բանաւոր խօսքեր և տեսողական արուեստներ իբրեւ հանրային քննարկումի և ընկերային փոխակերպումներու ներագող տարր:

Այս ընդլայնուած բնաբաններուն համարկումով **INSPARK** կը ձգտի ստեղծելու ժամանակակից քննարկումներու առնչուող և հայկական ընկերային ու մշակութային շրջարկներու մէջ խորապէս արմատաւորուած շարք մը նախագիծեր: Վերոնշեալ ընդարձակ և ճկուն բնաբանները նաեւ առիթ կու տան միջգիտակարգային նախագիծերու որոնք կրնան նպաստել երկարատեւ և դրական փոփոխութիւններու տեղական համայնքներէ ներս և անդին:

3. ԴԻՄՈՒՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՒ ՉԱՓԱՆԻՇԵՐ

- **Տարիք և բնակավայր**

Դիմողները պէտք է ըլլան ծագումով հայ, **21-40 տարեկանի միջեւ** և ներկայիս **Լիբանան բնակող**: Կընդունինք անհատական կամ խմբային դիմումներ:

- **Նախագիծի տարողություն**

Ներկայացուած գործը պէտք է ըլլայ այս մրցոյթին հիմնական բնաբաններուն անդրադարձող ստեղծարար նախաձեռնութիւն: Նախագիծերը կրնան ընդգրկել արուեստներ, լրատուամիջոցներ, արհեստաբանութիւն, գրականութիւն, կատարողական արուեստներ, մշակութային ժառանգութիւն, համայնքային ներգրառումաժողովներ և այլն:

- **Նախագիծերու ժամկէտներ**

Նախագիծերու տեւողութիւնը պէտք է ըլլայ առաւելագոյնը 24 ամիս:

- **Լեզու**

Արեւմտահայերէնի գործածութիւնը խրախուսելի է: Կարելի է նաեւ գործածել այլ լեզուներ եթէ աւելի լաւ ծառայեն նախագիծին:



- **Աշխարհագրական ուղղուածութիւն**

Նախագիծերը պէտք է իրականացուին (գէթ զգալի մասով) Լիբանանի մէջ եւ նպաստեն տեղւոյն հայ համայնքին:

- **Դիմումնագիրներու թիւ**

Իւրաքանչիւր անձ կամ խումբ կրնայ միայն **մէկ** առաջարկ ներկայացնել այս բաց մրցոյթին:

4. ԳՆԱՀԱՏՈՒՄԻ ՉԱՓԱՆԻՇԵՐ

Բոլոր առաջարկները պիտի քննուին ԳԿՀ-ի կազմած արժեւորող յանձնախումբին կողմէ՝ հետեւեալ չափանիշերուն համաձայն.

- **Ստեղծարարութիւն եւ նորարարութիւն**

Ուրոյն մտածողութիւն, գեղարուեստական ստեղծագործութիւն եւ նորարար մօտեցումներ:

- **Առնչութիւն եւ ընկերային ներգործութիւն**

Ծրագիրին բնաբաններուն պատշաճութիւն, դրական փոփոխութիւն յառաջացնելու կամ իմաստալից երկխօսութեան կայծ տալու կարողականութիւն:

- **Իրագործելիութիւն եւ յստակութիւն**

Իրատես եւ տրամաբանական ծրագրում՝ ծաւալի, ժամանակացոյցի եւ պիւտճէի լաւ սահմանումով:

- **Մշակութային նշանակութիւն**

Ներդրում հայ մշակոյթի եւ լեզուի մէջ, յատկապէս՝ արեւմտահայերէնի:

- **Առաջարկի որակ**

Ընդհանուր ներդաշնակութիւն, մանրամասնութիւն եւ նախագիծի գաղափարի ներկայացում:

5. ՎԵՐՋՆԱԺԱՄԿԷՏ ԵՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ

- **Մրցոյթի յայտարարութիւն**

Նախագիծերու մրցոյթը կը սկսի 5 մայիս 2025-ին:

- **Դիմումներու ներկայացման վերջնաժամկէտ**

31 օգոստոս 2025 (Լիզպոնի ժամով՝ 23:59):

Ուշացած դիմումնագիրները չեն ընդունուիր:

- **Գնահատում եւ որոշումներ**



Նպաստատուութեան մրցանակ շահողներուն անունները կը յայտարարուին մինչեւ 15 հոկտեմբեր 2025:

Բոլոր նախագիծերը պէտք է ներկայացուին առցանց՝ ԳԿՀ-ի MyGulbenkian հարթակին միջոցով:

6. ՆԱԽԱՀԱՇԻԻ

- Կը շնորհուի մինչեւ 10 նպաստ՝ իւրաքանչիւրը **7500 եւրոյի**:
- Տրամադրուած նպաստը կարելի է գործածել ուղղակի նախագիծի հետ առնչուած ծախսեր հոգալու, ներառեալ՝
 - **Ճամփորդական ծախսեր**
Փոխադրամիջոց եւ կեցութիւն՝ դիմողներուն:
 - **Առարկաներ եւ սարքեր**
Յատկապէս նախագիծի իրականացման անհրաժեշտ իրեր:
 - **Տեղի վարձք**
Աշխատանոցներու, ներկայացումներու կամ հանդիպումներու համար տեղ ապահովելու ծախսեր:
 - **Նախագիծը իրականացնողներու հաւաքագրումի ծախսեր, մասնագիտական սակեր եւ սպասարկութիւններու վճարումներ**
Խորհրդատուներ, միջնորդներ, արուեստագէտներ, թարգմանիչներ կամ նախագիծին համար անհրաժեշտ որեւէ արտաքին սպասարկութիւններ):
 - **Նախագիծի այլ ուղղակի ծախսեր**
Լրացուցիչ ծախսեր որոնք ուղղակիօրէն կապուած են նպատակներու իրագործումին (օրինակ՝ շուկայական գործունէութիւն, տպագրութիւն կամ ծանուցում).

Ժամանակացոյց եւ հիմնական պիւտճէի ուրուագիծ

Դիմումնագիրը պէտք է ներառէ հետեւեալը

- Նախագիծի գործադրութեան ժամանակացոյց:
- Հակիրճ բայց յստակ պիւտճէ՝ ակնկալուած ծախսերու հիմնական բաժանումով, ներառելով առարկաներ, անձնակազմ եւ այլ ծախսերու գնահատումներ:



Նախահաշիւը պէտք է համապատասխանէ նախագիծի ժամանակացոյցին եւ ծաւալին՝ արտացոլելով թէ ինչպէ՛ս պիտի օգտագործուի տրամադրուած նպաստը նշուած նպատակները իրագործելու համար:

7. ԼՐԱՅՈՒՑԻՉ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

ա. Նախագիծերու կառավարումի աշխատանոցներ

Նպաստատուութեան սկզբնական շրջանին, նպաստատուները նախագիծի կառավարման մասնագիտական պատրաստութիւն պիտի ստանան : Այս աշխատանոցները պիտի օգնեն մրցանակակիրներուն յղկելու իրենց ծրագիրները, գործադրութեան եւ իրագելման ռազմավարութիւններ մշակելու եւ անհրաժեշտութեան պարագային իւրացնելու հիմնական հմտութիւններ (պիտճէ պատրաստել, աշխատակազմ համակարգել, ծանուցել եւ այլն): Ասիկա նաեւ առիթ պիտի տայ մրցանակակիրներուն բաժնելու իրենց փորձառութիւններն ու գիտելիքները:

բ. Խորհրդատուութիւն

Նպաստատուութեան գործադրութեան ամբողջ ընթացքին ԳԿՀ-ն պիտի մնայ տրամադրութեան տակ՝ յաւելեալ ցուցմունքներով նախագիծը հասցնելու իր յաջող լրումին:

գ. Հաւաքական ցուցահանդէս

Նպաստատուութեան շրջանի աւարտին բոլոր նպաստատուները պիտի գործակցին իրենց աշխատանքը իմաստալից ձեւով ներկայացնելու ցուցահանդէսի մը կամ հանրային ներկայացումի մը ճամբով: Լրացուցիչ **15000 եւրոյի** հաւաքական պիտճէ մը պիտի յատկացուի այս նպատակին: Ձեռնարկին նպատակն է աւելի տեսանելի դարձնել իւրաքանչիւր նախագիծ, իթանել հաղորդակցութեան ցանցերը եւ պանծացնել իբրանանի հայ երիտասարդութեան ստեղծարարութիւնը: Մրցանակակիրները պիտի համադրեն ցուցահանդէսը, իսկ ԳԿՀ-ն պիտի հովանաւորէ անոր տարածումը՝ աւելի լայն հանրութեան հասցնելու նպատակով:

8. Ինչպէ՛ս դիմել

1. Առցանց դիմում

Դիմումնագիրը պէտք է լրացուի ԳԿՀ-ի Հայկական Համայնքներու Բաժանմունքին կայքէջին մէջ (5 մայիս 2025-էն ետք). Դիմումնագիրը պիտի ընդգրկէ՝



- Նախագիծի վերնագիր եւ ամփոփում
- Նախագիծի նկարագրություն (հայեցակարգ, նպատակներ, նշանակություն)
- Նախագիծի արդյունքներ
- Նախագիծի աշխատանքներ
- Ժամանակացոյց (հիմնական ուղենիշեր՝ սկիզբէն մինչեւ աւարտ)
- Պիտճէ (7500 եւրոյի նպաստի գործածութեան պատկերացումը՝ դասաւորուած բաժանումներով)
- Աշխատակազմի տուեալներ (ներառեալ համապատասխան պատրաստուածութիւն եւ փորձառութիւն)
- Գործադրութեան լեզու(ներ)
- Ակնկալուած արդիւնքներ եւ ներգործութիւն համայնքին վրայ
- (Ոչ պարտադիր) Օժանդակ նիւթեր (նախորդ աշխատանք, ճեպանկարներ-sketch, տեսանիւթեր եւ այլն)

Դիմումնագիրները կարելի է ներկայացնել հայերէն, անգլերէն կամ ֆրանսերէն լեզուներով:

2. Խորհրդատուութիւն

Դիմումներու ժամանակաշրջանին (մայիս-օգոստոս 2025) ԳԿՀ-ն խորհրդատուութեան նպատակով հասանելի պիտի ըլլայ դիմողներուն: Հարցումներու կամ ուղղութեան համար “INSPARK 2025 – Inquiry” վերնագիրով ել-նամակ մը պէտք է յղել carmenias@gulbenkian.pt հասցէին:

3. Ներկայացում

Լրացուած առցանց դիմումնագիրը պէտք է ներկայացուի 31 օգոստոս 2025-ի (Լիզպոնի ժամով՝ 23:59) վերջնաժամկետէն առաջ: Ուշացած դիմումնագիրները չեն ընդունուիր:

4. Գնահատում

Արժեւորող յանձնախումբը սեպտեմբերին պիտի քննէ բոլոր դիմումնագիրները: Վերջնական ցուցակի մէջ ներառուած թեկնածուներ թերեւս հրաւիրուին հարցազրոյցի: Որոշումները պիտի յայտարարուին մինչեւ 15 հոկտեմբեր 2025: Անհրաժեշտութեան պարագային, ԳԿՀ-ն կրնայ լրացուցիչ տեղեկութիւններ կամ յստակացումներ պահանջել արժեւորումի ընթացքին:

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան եւ իր Հայկական Համայնքներու Բաժանմունքին մասին յաւելեալ տեղեկութիւններու համար այցելե՛ք <https://gulbenkian.pt/armenian-communities/>

Անձնական տուեալներու պաշտպանութիւն

(Եւրոպական օրէնսդրութիւնը կը պարտադրէ այս բաժինը ընդգրկել դիմումնագիրին մէջ)

Անձնական տուեալներու գործածութեան միակ նպատակը պիտի ըլլայ գնահատել տուեալ նպաստի դիմումի ծրագիրը (INSPARK), որ պիտի կատարուի Գալուստ Գիւլպէնկեան Հիմնարկութեան (այսուհետեւ՝ ԳԿՀ) կողմէ: ԳԿՀ-ն պիտի ըլլայ երկրորդ մարմինը որ պիտի ունենայ տուեալներու գործածութեան իրաւունք:

Որեւէ ժամանակ, անհատը կրնայ խնդրել որ իրեն տրուի իր անձնական տուեալներու գործածութեան վերաբերեալ տեղեկութիւններ գրաւոր նամակ մը յղելով հետեւեալ էլ-նամակի հասցէին privacidade@gulbenkian.pt:

Անհատին անձնական տուեալները պիտի պահուին այնքան ժամանակ որքան պէտք է նպաստի դիմումնագիրը գնահատելու, բացի այն պարագաներէն երբ օրէնքը կը հաստատէ թէ այլ ժամկէտներ պէտք է յարգուին: Որոշ տեղեկութիւններ (օրինակ՝ անուն, դիմումի թուական, նպաստի պայմաններ եւ ժամկէտներ, ինչպէս նաեւ այլ անձնական տուեալներ որոնք առկայ են ծրագիրին աշխատանքներուն եւ կամ վերջնական հրատարակութիւններուն մէջ) ընդմիջտ պիտի պահուին ԳԿՀ-ի կողմէ, որպէսզի համատեղուին նմանատիպ տեղեկութիւններու հետ, իրենց համապատասխան մշակութային պարունակին մէջ:

Որեւէ ժամանակ, անհատը կրնայ խնդրել որ իր անձնական տուեալներու գործածութեան համար իր տուած հաւանութիւնը չեղեալ համարուի. ասիկա կարելի պիտի ըլլայ ընել առկայ օրէնսդրութեան համաձայն, եւ իր անդրադարձը պիտի չունենայ տուեալներու գործածութեան վրայ որ հիմնուած էր նախապէս տրուած հաւանութեան վրայ: Հաւանութեան չեղարկումը կը նշանակէ թէ ԳԿՀ-ն չի կրնար անձնական տուեալները գործածել այն նպատակով որուն գործածութեան շուրջ նախապէս հաւանութիւն ունէր. ասիկա իր հերթին կը նշանակէ թէ անհատին դիմումնագիրը այլեւս ի գործու չէ:

Առկայ օրէնսդրութեան համաձայն, տուեալներու գործածութեան հսկիչ մարմինը կերպաշխատէ որ անհատը կարենայ իր տուեալներուն հասնիլ, կամ խնդրել որ իր անձնական տուեալները ստուգուին, սրբագրուին, կամ ջնջուին, ինչպէս նաեւ սահմանափակուին:

Տուեալներու գործածութեան հսկիչ մարմինը կերպաշխատէ որ պէտք եղած ապահովական եւ ճշգրիտ միջոցները պիտի կիրարկուին անհատին անձնական տուեալներուն գործածութեան ժամանակ՝ թէ՛ այն պարագային երբ տուեալները գործածուին այս մարմինին կողմէ, թէ՛ ալ երբ անոնք գործածուին այլ մարմիններու կողմէ, որոնց հետ համաձայնութիւն կնքուած է:

Տուեալ նպաստի դիմումնագիրը համակարգելու նպատակով, տուեալներու գործածութեան հսկիչ մարմինը կրնայ տուեալները գործածել ուղղակիօրէն եւ կամ գործակից մարմիններու միջոցով. այս վերջինս միայն կը պատահի այն պարագային երբ, ըստ օրէնքի, համապատասխան պայմանագիրներ կան այս գործակից մարմիններուն հետ:

Տուեալ նպաստի դիմումնագիրը համակարգելու ծիրին մէջ, ԳԿՀ-ն կրնայ անձնական տուեալները փոխանցել գործակից մարմիններու որպէսզի անոնք հրատարակուին եւ գործածուին կազմակերպութեան հաղորդակցութեան նկատառումներով: Այս գործակից մարմինները կրնան Եւրոպական Միութեան սահմաններուն մէջ գտնուիլ, կամ ըլլալ արտասահման. այս վերջինին պարագային, ըստ օրէնքի, համապատասխան ընթացակարգեր ի գործ պիտի դրուին տուեալներու պաշտպանութիւնը մշտապէս ապահովելու համար:

Անհատը կրնայ բողոքի հայց ներկայացնել Փորթուկալական Ազգային Իշխանութիւններուն ("Comissão Nacional de Proteção de Dados"), եթէ պատճառ մը ունի կարծելու թէ տուեալներու գործածութեան երկու հսկիչ մարմինները վերոնշեալ պայմանները չեն յարգած տուեալներու պաշտպանութեան մէջ: